ԱԶԳ

# Միջազգային

Եւրոպան մէջ կարծում էր, թե ինքը զերծ է աւելի այլ վայրերում զոհերի հանգեցնող ժամանակակից աղանդներից: Երբ 1993 թ. հրդեհից 80 մարդ զոհվեց Դեյվիդ Քորեշի աղանդից կամ Գվիանայում 1978 թ. 923 մարդ անձնատուան եղավ թունավորման միջոցով, իրենց հոգեւոր ուսուցիչ Ջիմ Ջոնսի հրամանով, եւրոպացի-

ՀՈԳԵԿԱՆ

## Ինչու են աղանդները գրավում Եւրոպան

ները մտածեցին, թե դա իրենց չի վերաբերում եւ լոկ ամերիկացիների գործն է: 1986 թ. Ճշմարտության պաշտպանների եկեղեցու հետեւորդ 7 ճապոնացիների կամ Ֆիլիպինյան Մինդանաո կղզու 60 բնակիչների անձնասպանությունը հուզեց եւրոպացիներին, բայց տվյալ դեպքում եւս խոսքը «խորհրդավոր Ասիայի» մասին էր, որտեղ մահվան մասին այլ պատկերացումներ ունեն:

3. «Նոր դարաշրջանի» հետ կապված շարժեր ...



«Համաշխարհային մեծության» ...

ՀԱՄԱՌՈՏ

## Նավթը ավելի հանգիստ է արձագանքում

ԼՈՆԴՈՆ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Պարսից ծոցում իրավիճակի նոր սրմանը համաշխարհային նավթային շուկան բավականին հանգիստ է արձագանքել: Լոնդոնում գները բարձրացան միայն 35 սենթով, այսինքն՝ բրենտ տիպի նավթի մեկ բարելի գինը հասավ 17,25 դոլլարի, իսկ Նյու Յորքում իջավ ավելի ցածր գնի՝ 16,65 դոլլարի: Չորս տարի անց նմանատիպ իրադարձություններն ավելի տագնապալի արձագանքի տեղիք էին տվել: 90 թվականի հոկտեմբերին բրենտի մեկ բարելի գինը հասավ 40 դոլլարի: Ներկայիս հանգստությունը բացատրվում է երկու գործոններով. նավթի անբավարարվածության ռիսկի բացակայություն եւ Քուվեյթի նոր բռնազավթման փոքր հավանականություն:

## Ղարաբաղի հարց. Նոր եռակողմ հանդիպում Սան Ֆրանցիսկոյում

ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Սան Ֆրանցիսկոյում սկսվել է Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի հասարակայնության ներկայացուցիչների հանդիպումը, որ նախաձեռնել է «Գլոբըլ» կազմակերպությունը: Նախորդ երկու հանդիպումները կայացել էին Իրվայնում եւ Շուշիում: Չի բացառվում, որ հաջորդ՝ չորրորդ հանդիպումն անցնի Բաքվում:

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## Բացվեց Արեւելյան Եւրոպայում անկախ դատական համակարգի զարգացման գիտաժողովը

ՓԱՐԻԶ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եւրոպական 49 երկրների, այդ թվում ԱՊՀ հանրապետությունների, ինչպես նաեւ ԱՄՆ-ի սահմանադրական, գերագույն եւ այլ դատարանների ներկայացուցիչներ հավաքվել են Ստրասբուրգում քննարկելու Արեւելյան Եւրոպայի նոր ժողովրդավարական պետություններում անկախ եւ արդյունավետ դատական համակարգի ամրապնդման ուղիները:

Միջազգային գիտաժողովը կազմակերպվել է «Ժերար Ֆենիլի Ֆաունդեյշն» դեմոկրատիայի ուսումնասիրության ամերիկյան կենտրոնի, մարդու իրավունքների եւրոպական հանձնաժողովի եւ Եւրախորհրդարանի խորհրդարանական ժողովի կողմից: Գիտաժողովի մասնակից-

ների կիսնարկեն դատավորների անկախության ապահովման, դատավարություններում մարդու իրավունքների պաշտպանության, իշխանության այդ ճյուղերի հետ իրավասության բաժանման հարցեր, ինչպես նաեւ դատավորների վարքի կոդեքսը, նրանց նշանակման եւ լիազորությունների ժամկետի կարգը:

Ռուսաստանը գիտաժողովում կներկայացնեն սահմանադրական դատարանի անդամ Նիկոլայ Վիտրուկը եւ բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահ Վենիամին Յակովլեւը: Ստրասբուրգ են ժամանել նաեւ Ադրբեջանի, Հայաստանի եւ ԱՊՀ երկրների ու մերձբալթյան հանրապետությունների բարձրագույն դատական մարմինների ներկայացուցիչներ:

ԹԵԺ ԳՈՏԻ

## Հարավսլավիայում ՄԱԿ-ի զորքերի առաքելությունը կարող է ձախողվել

ՓԱՐԻԶ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախկին Հարավսլավիայում ՄԱԿ-ի «կապույտ սաղավարտների» առաքելությունը կարող է տապալվել մոտ ապագայում, գտնում է նախկին Հարավսլավիայում ՄԱԿ-ի ուժերի հրամանատար գեներալ Բերտրան դը Լապրեսը: Շարադրելով նրա տեսակետը, Փարիզի «Մոնդ» թերթը նշում է, որ ուժեղանում է բանակցային ճնշումը մահմեդական միջնատարածների եւ ՄԱԿ-ի ուժերի վրա: Իսկ Բոսնիայի կառավարական զորքերն օրեցօր ավելի ու ավելի շատ են հակասում նոր տարածքներ հետ նվաճելու, բերելով ՆԱՏՕ-ի աջակցությունն ստանալու հնարավորությունը: Բերտրան դը Լապրեսին մտահոգում է հենց ՆԱՏՕ-ի եւ հատկապես ամերիկացիների դիրքորոշումը, որոնք չեն ուզում հաշվի առնել հակամարտության գոտում ՄԱԿ-ի զինված ուժերի դժվարությունները:

## Լրացավ ՄԱԿ-ի 49-րդ տարին

Հոկտեմբերի 24-ին լրացավ Միավորված ազգերի կազմակերպության 49-րդ տարին: 1945 թ. այդ օրը ուժի մեջ մտավ ՄԱԿ-ի կանոնադրությունը, որը 1944 թ. Դումբարտոն Օքսի խորհրդաժողովում մշակել են ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի ու Չինաստանի ներկայացուցիչները, եւ 1945 թ. հունիսի 26-ին ստորագրել ... կազմակերպության օր:

ՄԱԿ-ի 49-ամյակի առթիվ նրա գլխավոր քարտուղար Բուտրոս-Ղալին հոկտեմբերի 25-ին հանդես է եկել դիմումով, որտեղ արդի աշխարհի վիճակի գլխավոր գիծ համարել է «դեպքերի աճող փոխկապվածությունը»:

«Անում է այն բանի ըմբռնումը, որ խաղաղության զարգացման եւ ժողովրդավարության նպատակները համատեղ մեծ ջանքեր են պահանջում», հայտարարել է Բուտրոս-Ղալին:

«Ուենք եկել ժամանակն է կեսդար ... ՄԱԿ-ը օգտագործել որպես հիմնարար վերափոխումների շարժիչ ուժ, որոնք թույլ կտան մեր աշխարհը դարձնել բարգավաճ, առանց պատերազմների:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

## Ե. Գայդար. Այդպես այլեւս շարունակել չի կարելի

Նիժնի Նովգորոդում գտնվող Պետական դումայի «Ռուսաստանի ընտրություն» խմբակցության ղեկավար Եգոր Գայդարը ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտարարել է. «Ռուսաստանի ներկայիս կառավարությունն ընթացիկ տարվա արդյունքն ըստ էության ...

ճգնաժամի տեմպը: Այդ պատճառով է, որ այնուամենայնիվ էկոնոմիկայում ձեռք բերված անտեղի կոռավ»:

«Այսուհետ նման տակտիկա շարունակել չի կարելի, ընդգծել է Եգոր Գայդարը: Ռուսաստանի տնտեսությունը անհրաժեշտ է համար-ճգնաժամի խիստ ճշման ստրատեգիա: «Ռուսաստանի ընտրության» խմբակցության ղեկավարը ...

ծել է Ռուսաստանի 1995 թվականի բյուջեի նախագիծը, սակայն ասել է, թե «էկոնոմիկայի առողջացման ճանապարհին արգելակող հանգամանքներ կարող են դառնալ ռազմական բարենորոգման բացակայությունը, ագրարային հատվածում բարեփոխումների դանդաղկոտությունը եւ աշխատավարձի պահպանման վիրխարի ծախսերը»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ




digitised by A.R.A.R.@

